Ամփոփ նյութ

«ԱՐԴՇՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ՝ բանկային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՐՈՇՈՒՄ 20.01.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/02 ԲԳ-Ա

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումը թույլ տալու համար Բանկի նկատմամբ կիրառել ***տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև նախազգուշացում՝*** թույլ տրված խախտումը վերացնելու և ապագայում նման խախտումներ թույլ չտալու, ինչպես նաև հետևյալ միջոցառումներն իրականացնելու հանձնարարականով.

- Ձեռնարկել Բանկի կողմից Կենտրոնական բանկ 10.11.2020թ. թիվ 300-606ԲԳ և 16.12.2020թ. թիվ 281-14522 գրություններով ներկայացված միջոցառումները.
- Բանկի որպես ապահովագրական գործակալ հանդես գալու դեպքում հաճախորդին տրամադրել ապահովագրական վկայագրեր, իսկ որպես ապահովադիր հանդես գալու դեպքում՝ ապահովագրության էական պայմանները պարունակող վկայագիր (տեղեկանք).
- տոկոսային արտահայտությամբ բացահայտել ոսկու գրավի ապահովությամբ վարկերի տրամադրման ընթացքում հաճախորդների կողմից ապահովագրության համար կատարվող վճարը վարկի ձեռքբերման համար կատարվող ընդհանուր ծախսի շրջանակում կամ ներառել սպառողական վարկի ընդհանուր ծախսի վերջնական (փաստացի տոկոսադրույքի) հաշվարկում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բանկ մուտքագրվելու կամ Բանկի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**